ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
23.11.2021 թ. թիվ 170Ա որոշմամբ

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2020 թ. 4-րդ եռ. - 2021 թ. 3-րդ եռ.)

Հաշվետու՝ 2020 թվականի չորրորդ եռամսյակից մինչև 2021 թվականի չորրորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածում ողջ աշխարհում շարունակվող համավարակի և պարբերաբար բռնկվող նոր ալիքների հետևանքով պահպանվել են համաշխարհային տնտեսության և առողջապահական համակարգի առջև ծառացած խնդիրներն ու մարտահրավերները, ինչպես նաև տնտեսական հեռանկարների հետ կապված անորոշությունները: Այդուհանդերձ, 2021 թ. սկզբից կորոնավիրուսի դեմ պատվաստանյութերի լայնածավալ կիրառման և հիմնականում տնտեսական խիստ սահմանափակումներից խուսափելու արդյունքում դիտվել է համաշխարհային տնտեսության ու արտաքին պահանջարկի՝ սպասվածից ավելի արագ տեմպերով վերականգնում: Վերջինիս ներքո միջազգային ապրանքահումքային շուկաներում և ՀՀ հիմնական գործընկեր երկրներում գնաճային միջավայրն էականորեն ընդլայնվել է: Նմանատիպ միտումներ են դրսևորվել նաև Հայաստանում, ինչի պարագայում թե՛ տնտեսական աճի և թե՛ գնաճի փաստացի ցուցանիշները առավելապես գերազանցել են կանխատեսումները: Հաշվետու ժամանակահատվածում արտաքին հատվածից փոխանցված ավելի գնաճային ազդեցության, ՀՀ տնտեսությունում դրսևորված մի շարք առաջարկի ու պահանջարկի գործոնների և ՀՀ արժութային շուկայում դրամի արժեզրկման պայմաններում 12-ամսյա գնաճը ցուցաբերել է աճողական վարքագիծ՝ 2020 թ. սեպտեմբերի 1.4%-ից 2021 թ. սեպտեմբերին հասնելով 8.9%-ի: Հաշվի առնելով արտաքին հատվածից փոխանցվող և ՀՀ տնտեսությունում դրսևորվող գնաճային ազդեցություններն ու դրանց զուգահեռ գնաճային սպասումների ավելացումը՝ հաշվետու ժամանակահատվածում ԿԲ-ն, աստիճանաբար չեզոքացնելով խթանող դիրքը, ընդհանուր հաշվով 3.0 տոկոսային կետով բարձրացրել է քաղաքականության տոկոսադրույքը՝ սեպտեմբերի դրությամբ հասցնելով 7.25%-ի:

1. ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածի սկզբին իրականացվելիք դրամավարկային քաղաքականությունը կառուցված էր հետևյալ հիմնարար դատողությունների վրա: Մասնավորապես՝ 2020 թ. չորրորդ եռամսյակում ռազմական դրության, կորոնավիրուսի համավարակի երկրորդ ալիքի տարածման բարձր տեմպերի, ինչպես նաև այս գործոնների ֆոնին աճող անորոշությունների պայմաններում ակնկալվում էր ցածր տնտեսական ակտիվություն և թույլ պահանջարկի միջավայրի պահպանում: 2021 թ. սկսած՝ որոշակի բացասական գործոններ ևս, ինչպիսիք էին ֆինանսական միջնորդության աճի տեմպերի սպասվող թուլացումը, ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության նախանշվող թույլ զսպող ազդեցությունը, որոշակիորեն կզսպեին ամբողջական պահանջարկը: Այդուհանդերձ, ներքին գների վրա արտաքին ապրանքահումքային շուկաներից փոխանցվող գնաճային ճնշումների և դրամի փաստացի ար-

ժեզրկման ազդեցության ներքո առաջիկա մեկ տարվա համար կանխատեսվում էր գնաճի արագացում: Հաշվի առնելով գնաճային միջավայրի սպասվող ընդլայնումը և երկրում հայտարարված ռազմական դրության ներքո ՀՀ ռիսկի հավելավճարի աճը՝ ԿԲ-ն հակված էր աստիճանաբար կրճատելու դրամավարկային խթանող դիրքը՝ գնաճի նպատակի իրագործման համար:

Հաշվետու ժամանակահատվածում թե՛ արտաքին հատվածում և թե՛ ՀՀ տնտեսությունում ձևավորվել են կանխատեսվածի համեմատությամբ ավելի դրական մակրոտնտեսական զարգացումներ: Այսպես՝ կորոնավիրուսի դեմ պատվաստանյութերի լայնածավալ կիրառման և խիստ սահմանափակումներից հնարավորինս խուսափելու արդյունքում դիտվել է համաշխարհային տնտեսական ակտիվության և արտաքին պահանջարկի ավելի արագ տեմպերով վերականգնում: Պահանջարկի դրական զարգացումների ֆոնին դրսևորված առաջարկի մի շարք գործոնների (նոր բերքի ցածր առաջարկի վերաբերյալ կանխատեսումներ, բեռնափոխադրումների ծախսերի ավելացում, արտադրական շղթաների խաթարումներ) ազդեցությամբ միջազգային ապրանքահումքային շուկաներում արձանագրվել են գնաճային էական զարգացումներ: Դա արտահայտվել է նաև ՀՀ հիմնական գործընկեր երկրներում բարձր գնաճային միջավայրի ձևավորմամբ, ինչի ներքո մի շարք ներմուծվող պարենային ապրանքների միջոցով գնաճային ճնշումներ են փոխանցվել ՀՀ տնտեսություն: 2021 թ. երկրորդ եռամսյակում պարենային ապրանքների միջազգային գներից ներքին գներին փոխանցվող գնաճային ազդեցության առաջարկի գործոններին ավելացել են նաև պահանջարկի գործոններ՝ պայմանավորված արտադրական կարողությունների ընդլայնման հնարավորությունների նկատմամբ մասնավոր սպառման առաջանցիկ մեծ աճով: Վերջինս առավելապես պայմանավորվել է կուտակված խնայողությունների հաշվին բնակչության՝ սպառմանն ուղղված ծախսումների կտրուկ ավելացմամբ, ինչպես նաև արտերկրից մեծածավալ դրամական փոխանցումների ներհոսքով: Միաժամանակ, ռազմական դրության և տնտեսաքաղաքական անորոշությունների պայմաններում հաշվետու ժամանակահատվածի սկզբին արժութային շուկայում դիտվել է ՀՀ դրամի արժեզրկում, ինչը, արտաքին հաշվեկշռվածության հիմնարար բարելավման պայմաններում, հիմնականում ճշգրտվել է դրամի հետագա արժևորմամբ: ***Նշված գործոնների ազդեցությամբ հաշվետու ժամանակահատվածում, ինչպես և սպասվում էր, 12-ամսյա գնաճը ցուցաբերել է աճողական վարքագիծ՝ 2020 թ. սեպտեմբերի 1.4%-ից այս տարվա սեպտեմբերին հասնելով 8.9%-ի:*** Տնտեսական հեռանկարի հետ կապված մեծ անորոշությունները որոշ չափով ավելացրել են նաև գնաճային սպասումները: Այս ամենն արտահայտվել է նաև բնականոն գնաճի վարքագծում. ***նշված ժամանակահատվածում 12-ամսյա բնականոն գնաճը ևս զգալիորեն ավելացել է՝ սեպտեմբերին կազմելով 8.0%: Ընդ որում, հատկանշական է, որ եռամսյակային տարեկանացված բնականոն գնաճը հիմնականում ավելացել է հաշվետու ժամանակահատվածի առաջին երկու եռամսյակներում, իսկ այնուհետև՝ մինչև 2021 թ. երրորդ եռամսյակ, էականորեն նվազել է մինչև 3% մակարդակ:***

Ելնելով նշված զարգացումներից՝ հաշվետու ժամանակահատվածի յուրաքանչյուր հաջորդ եռամսյակում գնաճի՝ նպատակային ցուցանիշին հասնելու կանխատեսվող ուղեգիծը կարճաժամկետ հատվածի համար ճշգրտվել է դեպի վերև:

Հաշվետու ժամանակահատվածում 12-ամսյա գնաճի կարճաժամկետ կանխատեսումները պարբերաբար վերագնահատվել են վերևի ուղղությամբ



Հաշվետու ժամանակահատվածում համավարակի և հայտարարված ռազմական դրությունից բխող անորոշությունների հետևանքով ՀՀ ֆինանսական շուկայում ձևավորվել է դրամային իրացվելիության նկատմամբ բարձր պահանջարկ, որը ԿԲ-ն ամբողջությամբ բավարարել է առավելապես իր հիմնական գործիքի (7-օրյա ռեպո համաձայնագրեր) միջոցով: Արդյունքում՝ շուկայական կարճաժամկետ տոկոսադրույքները հիմնականում ձևավորվել են քաղաքականության տոկոսադրույքի շուրջ: Հաշվետու 12-ամսյա ժամանակահատվածի ընթացքում ԿԲ-ն, հավատարիմ մնալով լողացող փոխարժեքի քաղաքականությանը, միայն իրավիճակային մասնակցություն է ունեցել արժութային շուկայում՝ ֆինանսական շուկայի բնականոն գործունեության ապահովման նպատակով:

Հաշվի առնելով արտաքին հատվածում և ՀՀ տնտեսությունում պահպանվող գնաճային ազդեցությունները և դրանց զուգահեռ գնաճային սպասումների որոշակի ավելացումը՝ հաշվետու ժամանակահատվածում ԿԲ-ն, ինչպես և նախատեսված էր, վարել է դրամավարկային պայմանների խստացման քաղաքականություն՝ աստիճանաբար կրճատելով և չեզոքացնելով դրամավարկային խթանող դիրքը: Այդ նպատակով ԿԲ-ն համեմատաբար մեծ քայլերով և ընդհանուր հաշվով 3.0 տոկոսային կետով բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սեպտեմբերին սահմանելով 7.25%: Գնահատվում է, որ դրամավարկային պայմանների նման հետևողական խստացումը բավարար ազդեցություն է ունենում առաջանցիկ պահանջարկի կարգավորման, գնաճի զսպման և միջնաժամկետում գնաճի նպատակի ապահովման առումներով:

2. ԳՆԱՃԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2020 թվականի վերջից գնաճն արագացել է, և, ինչպես կանխատեսվում էր, բարձր գնաճային միջավայրը պահպանվել է հաշվետու ժամանակահատվածում:

Տարեվերջին գնաճի ավելացումը ընդհանուր առմամբ պայմանավորվել է բնականոն գնաճի արագացմամբ, ինչին էապես նպաստել է ներմուծված պարենային և ոչ պարենային ապրանքների գնաճը: Վերջինս կրել է ինչպես միջազգային շուկաներում պարենային ապրանքների գների, այնպես էլ դրամի արժեզրկման ազդեցությունը: Այսպես՝ միջազգային շուկաներից փոխանցվող ազդեցությունների հետևանքով ներքին տնտեսությունում դիտվել է «Հացաբուլկեղեն և ձավարեղեն», «Յուղեր և ճարպեր», «Շաքարավազ» ապրանքախմբերի գների կտրուկ աճ: Էներգակիրների միջազգային գների ավելացումն իր ազդեցությունն է փոխանցել վառելիքի գներին: Վառելիքի գների աճի, ինչպես և որոշ երկրների կողմից համավարակի կանխարգելման նպատակով կիրառվող օդային հաղորդակցության սահմանափակումների թուլացման արդյունքում նկատելի աճել են նաև օդային տրանսպորտի սակագները: 12-ամսյա գնաճին էապես նպաստել է նաև դեղագործական ապրանքների գների աճը, ինչը գրեթե ամբողջությամբ պայմանավորվել է համավարակի ընթացքում դրսևորված բարձր պահանջարկով: Հատկանշական է նաև միջազգային բեռնափոխադրումների գների կտրուկ աճը, ինչն իր ազդեցությունն է ունեցել ներմուծվող ապրանքների (հատկապես՝ էլեկտրատեխնիկայի, հագուստի և կոշիկի, ինչպես նաև անձնական խնամքի պարագաների) գնաճի վրա:

2021 թվականի առաջին կիսամյակում ապրանքահումքային հիմնական շուկաներում շարունակել են արձանագրվել գնաճային միտումներ՝ պայմանավորված պահանջարկի վերականգնման դրական սպասումների և դիտված մի շարք առաջարկի գործոնների ազդեցությամբ, ինչն արտահայտվել է նաև ՀՀ ներմուծված պարենային ապրանքների գների ավելացմամբ: Միևնույն ժամանակ, ներքին տնտեսությունում պահանջարկի՝ սպասվածից ավելի արագ վերականգնմանը զուգընթաց, նշված ժամանակահատվածում արձանագրվել է նաև տեղական արտադրության ապրանքների և ծառայությունների գների բարձր աճ, ինչի ներքո համեմատաբար բարձր գնային կոշտություններ ունեցող մի շարք ծառայությունների (բժշկական, վարսավիրանոցային, իրավաբանական, փոստային) գներ ճշգրտվել են:

Բացի վերը նշված գործոններից, գնաճի արագացմանը էապես նպաստել է 2021 թվականի երրորդ եռամսյակում սեզոնային պարենային ապրանքների՝ սեզոնին ոչ բնորոշ առավել թույլ գնանկումային դրսևորումը: Հատկապես բանջարեղենի ավելի թույլ գնանկումային վարքագծի վրա իրենց ազդեցությունն են ունեցել ինչպես վատ եղանակային պայմանները, այնպես էլ որոշ առանձին ապրանքատեսակների ցանքատարածությունների կրճատումն ու արտահանման աճը

Կարգավորվող ծառայությունների սակագները տարվա ընթացքում դրսևորել են թույլ գնաճային տատանողականություն՝ 2021 թվականի երրորդ եռամսյակում արձանագրելով տ/տ 0.6% աճ:

«Ծխախոտային արտադրատեսակներ» և «Ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբերի գների աճը, ինչպես և գնահատվում էր, շարունակել է կրել տարեսկզբին ակցիզային հարկի դրույքաչափերի փոփոխության գնաճային ազդեցությունը:

Եռամսյակային գնաճի արագացում հիմնականում դիտարկվել է հաշվետու ժամանակահատվածի սկզբին, թեև դեռևս արտահայտվում է 12-ամսյա գնաճի ցուցանիշներում



Աղյուսակ 1

Ապրանքախմբի անվանումը	Կշիռներ	12-ամսյա գնաճ	Նպաստումը տ/տ գնաճին
Բնականոն գնաճ	**74.4**	**8.0**	**5.9**
Հացաբուլկեղեն և ձավարեղեն	7.7	9.5	0.7
Միս	9.7	9.0	0.9
Յուղեր և ճարպեր	2.3	27.1	0.6
Շաքարավազ	0.4	31.1	0.1
Ալկոհոլային խմիչքներ	2.9	8.6	0.2
Ծխախոտային արտադրատեսակներ	1.6	10.4	0.2
Հագուստ	2.5	12.9	0.3
Կոշիկ	1.6	11.7	0.2
Կենցաղային սարքեր	0.5	12.4	0.1
Դեղագործական ապրանքներ, բժշկական սարքավորանք և սարքեր	4.0	9.5	0.4
Վառելիք	6.0	10.3	0.6
Օդային մարդատար տրանսպորտի ծառայություն	0.6	22.2	0.1
Ամբուլատոր ծառայություն	2.9	2.3	0.1
Սեզոնային պարենային ապրանքներ	**9.6**	**28.3**	**2.7**
Ձու	1.3	27.4	0.4
Մրգեր	3.7	-3.0	-0.1
Բանջարեղեն	4.7	64.5	3.0
Կարգավորվող ծառայություններ	**16.0**	**0.6**	**0.1**